



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

16.03.2020թ
Ե/104-2020

ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 20.01.2020թ թիվ 01/107.3/00404-2020 գրությանը ներկայացնում ենք ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու 2020թ մարտի 17-ին կայանալիք նիստի վերաբերյալ տեղեկացումը, ավագանու կայանալիք նիստի օրակարգը, նիստում քննարկվելիք հարցերի վերաբերյալ ընդունվելիք որոշումների նախագծերը՝ ըստ կից հավելվածների:

Առդիր՝ 3 էջ:

Համայնքի ղեկավար՝

Ա. Փիլոյան



ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Սարահարթ համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Սարահարթ	Ավագանու արտահերթ նիստ	17.03.2020թ	10:00	Սարահարթի համայնքապետարանի նիստերի դահլիճ (Սարահարթ համայնք 10փ 1նրբ. 1շ)

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020Թ ՄԱՐՏԻ 17_Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ մասի 17 կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 2020թ մարտի 17-ի նիստի օրակարգը:

1. Սարահարթ համայնքի ավագանու 2020թ մարտի 17-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Զեկ. Ա.

Փիլոյան/

2. Սարահարթ համայնքի ավագանու անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի 7 ենթակետով, և հաշվի առնելով Սարահարթ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու անդամներ Նազար Մանուկյանի և Վահան Բարիկյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել: 2019թ-ին համայնքի ավագանու 12 նիստերից Նազար Մանուկյանը 12-ին չի մասնակցել, իսկ Վահան Բարիկյանը 10-ին :
2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից: